



չէր. թէեւ հարուստ էր՝ բայց իւր առանին կեանքը չափաւոր էր. նոյն իսկ կը խօսուէր, թէ երբեմն երբեմն սեւամաղձոտութեան երեւոյթներ կը նշմարուին անոր վրայ:

Իշխանն իբր յիսնամեայ կ'երեւար. իւր կերպարանքը հեղ էր, մարմէր չուներ. բերնի բովելը միայն երկու խոռոչներ կային, որոնց պատճառը՝ հասակը կամ թերեւս հոգեկան գաղտնի վշտեր էին:

Սրահին բարձր պատահաններէն՝ շքեղ եւ ահագին պալատներով փառաւոր եւ յափշտակէր փողոցը կը տեսնուէր, ուր արտաքց կարգի կենդանութիւն մը կը տիրէր: Արեգակն այսօր թէեւ ձմեռ, երկնից կապուտակ կամարէն յերկիր կ'առաքէր իւր ճառագայթները: Բայելիքը՝ իրենց արծաթեայ բոժոժներով, հոժկու եւ մուշտակապատ կառապաններով, եւ արքունական ոսկեգօծ կառքերն զիրար կը յաղորդէին սուրալով եւ խուռն բազմութիւն մը կ'երթնեւէր շտապաւ:

Այս վայրկենիս վայելուչ բայելիք մ'ալ կ'անցնէր. մուշտակէ թանկագին վերարկու հագած երիտասարդ միջերնին կը վարէր զայն. ձեռքի խարաղանով բարեւ տուաւ երիտասարդն որուն պատասխանեց իշխանը հաճութեամբ՝ մինչդեռ ֆէոտորա աչքն անգամ չվերցուց իւր ձեռագործէն:

«Փանինքի կոմսին դէմ հակառակութիւն մ'ունիս, բաւ. Օրլովիչ մեղմով, այլ յանդիմանական եղանակաւ մը, կանանց եւ արքունեաց սիրելոյն հետ այնպիսի կերպով կը վարուի, որ պաղովթիւն կը շնչէ. եթէ այսպէս շարունակելու ըլլաս, կը կարծեմ թէ կայսրուհին պիտի վշտացնես»:

«Իրեն կ'ըսեմ, թէ Փանինքի կոմսն ինծի համար շատ ընտիր անձնաւորութիւն մըն է, ծիծաղելով պատասխանեց մանկամարդ օրիորդը: Իւր քծիքն անհոտ երկնազոյն ծաղիկ կը նմանի եւ բաց ասկէ — Լաֆոն՝ երիտասարդ տեղակալը չպատմեց մեզի՝ որ կոմսն այն վայրագ տեղակալն — Գրիգորովիչ — բարեկամն է, որ ոչ շատ որ յառաջ՝ իւր արրեւութեան ժամանակը զիս թնշամանեց եւ միայն Պօղոս Մեծ - իշխանին աղաչանց զինանելով զինքը բանտէն ազատեց կայսրուհին»:

«Ի՛նչ հոգ ընելու բան ունի Մեծ - իշխանը, որ իւր պաշտօնակալներէն մին մանկամարդ օրիորդ մը վերաւորեալ է, յարեց կոմսը. ի Վալինա Գրիգորովիչէն պահանջնալ մի միայն յատկութիւնն է կարգաւորեալ զինուոր ըլլալ: Կարծեմ

թէ տխուր օրեր պիտի գան, եթէ մեծն Վատարին է իւր աշուրները փակէ, ոսկին տեղի պիտի տայ արծաթոյն առջեւը եւ — ձայնը մեղմացաւ — հիստից շարժումը բաւական տարիք ունի. արդէն անգամ մը — իւր թոխին՝ Շուէտի Վոստաֆ թագաւորին նշանելու երիկունս — կաթուածահար եղաւ. կրնայ կաթուածը կրկնուի: Բարձր ձայնիւ յառաջ տանելով բաւժ թէ կ'ուզէի զքեզ ապահոված տեսնել. կրնայ ալ ըլլալ, որ Վատարինէն վախճանելովն ի Ռուսաստան փոփոխութիւններ ըլլան, որով եւ ես իմ ունեցած գիրքս կորսնցնելով՝ փեսայիս տունն ապաստանարան ինչպիսի ստիպուիմ, եւ կայսրուհին ալ կը բազմայ, որ — »

«Ա՛հ: Ֆէոտորայի այտերն սաստիկ կարմիր է եւ աչքերն պայծառանալ սկսան. հեռուն ներաւարտ պատանի մը տեսած էր պաշտօնական զգեստով: Երիտասարդ զօրականին աչքերն ուրախ զուարթ կը նայէին աշխարհի, իսկ լայն սպիտակ ձեակաւ հանձարոյ ու հաստատամտութեան նշանակ էր: Իւր գէպը գեղեցիկ էր եւ փքրիկ խարտեալ ընւացք մը վերին շրթները կը զարդարէր:

«Լաֆոն տեղակալը, ըսաւ հայրը, եւ յետոյ ծանրութեամբ իւր գտներ վրայ բեւեռելով աչքերն՝ յառաջ տարաւ. ֆէոտորա, վերջապէս մատնեցիր ինծի այն բանը, զոր ես շատ ժամանակէ հետէ կ'իմանայի, սակայն հաւատալ չէի ուզեր. դուն՝ Օրլովիչ իշխանին դուստրը, կը սիրես զԼաֆոն, որ անանուն եւ չքաւոր պաշտօնական մըն է»:

Ֆէոտորա ոտը ելաւ: Իւր թխահար գլուխը հօրը կրծոց մերձեցուց եւ գորովով կը նայէր անոր կերպարանաց:

«Այո՛. հայր իմ, ըսաւ զգածեալ ձայնով, ալ իմացած ես: Լաֆոն տեղակալն էր՝ որ ինծի պաշտպան հանդիսացաւ ընդդէմ այն վայրագ եւ ժայիճ պաշտօնակալին. Լաֆոնն էր որ զիս միւսանգամ քեզի բերաւ, երբ ինծի ընկերացող ծառան Գրիգորովիչն սրէն վախճալով փախաւ: Արի՛մ ընդունեցար դուն զինքն ու նոյն օրէն սկսեալ մեր տան դռներն իրեն բացուեցան: Ասոր բնութիւնը բոլորովին տարբեր է այն թուրքաւոր ու շողորդ թմարուն բնութիւնէն, որուն աւուրող էութիւնը եւ զգածումն արտաքին պատուադիր ձեւոց սահմանն ունիս իւրից կ'անցնի»:

«Լաֆոն թու. այս միտութիւնդ գիտէ՛, հարցուց հայրը. ապահով ես, որ ինք կը հաւանի»:

«Երբեք այսպիսի խօսք մ'ըսելու չէր հա՛մարձակեր Օրլովիչ իշխանին գտներ» որ զինք

մեծ սիրով իւր տունը կը հիւրընկալէ. բայց իւր բերին ըսել չհամարձակած՝ աչքերն ինծի կ'ընես: Սիրելի Յայր, այդպէս խիտ մի նայիր. երբեք երիտասարդ եղած չեմ, երբեք նոր արթնցող սրտի յատուկ զգածմամբ՝ սիրած չեմ: Ալէքսի Լաֆոն՝ Օրլովիչ իշխանուհւոյն սիրոյն արժանաւոր է:»

Իշխանն իւր աղջկան պատասխանէ՝ դառու-նահար եղածի պէս ցնցեցաւ. «Ա՛յ — յարեց մեղմով — երբեմն սիրած եմ. — սոյն յիշա-տականը յիս մի զարթուցաներ. — բայց յիտոյ կրկնապատկեր տուժած եմ: Այս պատճառաւ է որ զքեզ երանիկ երջանիկ տեսնել կը բաղ-ձամ — եւ ստոյգ ալ, պատանին Լաֆոն պատու-աւոր նկարագիր մ'ունի — բայց ձեր ընկերա-կան դիրքն իրարու այնպէս անմտն է՝ որ ձեր երկուքին մէջ միութիւն մը յառաջ բերելու վրայ մտածելն իսկ յետիս յիմարութիւն կ'ըլ-լար. ի՛նչ կ'ըսէ արքունիքն ու ի՛նչ կայսրուհին:»

«Կատարինէ ազնուաբոհ՝ է. սիրտս իրեն կը բանաժ պնդէս, ինչպէս կը բանայի մօրս, եւ ինքն ընտրածս իւր շնորհաց մոգական գաւազա-նաւը կը շօշափէ եւ —»

Սրահին գուռը բացուեցաւ. «Լաֆոն տե-ղակալ», ծանօցց ապաստւորը: Թեթեւ կար-մութիւն մը պատեց ֆէոտորայի կերպարանքը, մինչդեռ Յայրը տեղակալին ներս մտնելուն հիւս-ման կու տար. բանի մը վայրկեան ետքը երիտա-սարդ պաշտօնակալը սրահ մտաւ:

Առանց ամենեւին սեթեւեթեթ ձեւերով՝ մեծարանք ողջունեց իշխանն ու մանկամարդ օրիորդը:

«Զիշտ ժամանակին եկաք, տեղակալ, ըսաւ իշխանը, հիմա շեր վրայ կը խօսէինք: Ֆէոտորա կը ցանկար որ դուք առաջինն ըլլաք նոր լուրն իմանալու մէջ:»

Պատանին փոքր աղջկան պէս կարմրեցաւ:

«Այդ ֆէոտորա իշխանուհւոյն բարեբա-րութիւնն է, ըսաւ խոնարհելով, եւ ապահով եմ որ զիս այժմէն մասնակից —»

«Կայսրուհին կը բաղձայ, որ ֆէոտորա ա-մուսնանայ. եւ իրեն առաջարկեց ֆանինսքի կոմսը:»

Աղջկան դեղինին եւ բովանդակ մարմնովն դողալ իշխանին առէն տարակոյսներն փարատե-ցին. ֆէոտորան ճամբարիտ խօսած էր:

«Արգարեւ, կցեց պաշտօնակալն ոչ շատ դիւրութեամբ, այս լուրը շատ անանկալ է:»

Ձեռքը կրծոցը մերձեցուց, իբր թէ կ'ու-զէր գրծել եւ ամոքել այն ցուր, որ հրաբոր-բոր երկակթի պէս սիրաւ կը ճմլէր:

Ֆէոտորա ո՛չ խօսքով եւ ո՛չ հայեցում-քով յայտնել կը համարձակէր իւր ցաւակցու-թիւնը, որ գրաւած էր իւր սիրտն. — թէեւ միւս կողմանէ ալ ուրախութեան զգածում մը վրան կը տիրէր:

Իշխանն իբր թէ պաշտօնակալին այլալու-թիւնը նշմարած չէր, խօսքը յառաջ տարաւ.

«Կ'ուզէի գիտնալ թէ ի՛նչ կարծիք ունիք ֆանինսքի վրայ՝ որ անշուշտ շեղ ծանօթ պիտի ըլլայ ի ձեռն իւր բարեկամաց. առանձնասե-նեակս կու գա՞նք:»

«Հրաման տուր որ երթամ, խնդրեց ֆեո-տորա, վրան զի եկաւ այն ժամը՝ յորում տան գործոց նկատմամբ հարկ եղած հրամաններ տալ սովոր եմ:»

Իշխանին ձեռքը համբուրելով եւ Ալէք-սիի հրաձեռտի ուրախան հայեացք մ'արձա-կելով՝ մեկնեցաւ սրահէն: Իշխանն ու Ալէքսի առանձին ծնացին:

Ալէքսի լուծիւնն ընդհատելով խօսելու սկսաւ: Մերձեցաւ իշխանին եւ յուզեալ եւ դողդոջուն ձայնով ըսաւ.

«Տէր իշխան, ֆանինսքի պատանւոյն վրայ ունեցած կարծիքս կ'ուզեք լսել. — ահա իմ կարծիքս, զոր համարձակ կը յայտնեմ, թէ եւ ինքը կայսրուհւոյն պաշտպանալը ըլլայ. եւ ես առով պաշտպանը ըլլամ՝ եւ կենքս իսկ կորսն-ցնեմ՝ — ուրախութեամբ կը զոհեմ ամենայն ինչ, եթէ յաղորդմ ֆէոտորա իշխանուհին ֆա-նինսքի կոմսին կ'ընն ըլլալու դաժան վիճակէն զերծուցանել: Երիտասարդ կոմսը Գրիգորովիչ տեղակալին մտերիմ աւ սրտակից բարեկամն է — եւ այս յայտնի կը ցուցնէ իրեն ինչպիսի մէկն ըլլալը: Գրիգորովիչ եւ ոչ իսկ հոգ կ'ընէ իւր մտածմունքներն աշխարհի առջեւ. ծածկե-լու. ընդհակառակն ֆանինսքի՝ որ ամէն միւռ-թիւնաց ընտանի եւ բարեկամ է, գիտէ զանոնք կաշեայ ձեռնոցներով շօշափել՝ իւր ձեռաց սպի-տակութիւնն չտգեղացնելու համար:»

Աւթապառ դարեցեց խօսքը:

«Ընդ վայր կը յուզեք, բարեկամ, պա-տասխանեց իշխանը ծիծաղելով, վայրկի մի եւս՝ եւ պիտի համարէի թէ Ձեր ֆանինսքի կոմսին վրայ կարգացած դատապարտութեան այս վճռոյն մէջ անձնասիրութիւնն ալ մաս ունի:»

Լաֆոնի դէմքը կարմրեցաւ:

«Տէր իմ, եւս —»

«Դուք պատուաւոր երիտասարդ մըն էք, ընդհատեց Օրլովիչ, եւ Ձեր կարծիքն իմ եւ զատկար կարծեաց բոլորովն համապատասխան

է. բայց ֆէոտորա՝ փանինքի կոմսն իրեն այր չուզելու ուրիշ մասնաւոր պատճառ մ'եւս ունի. իւր սիրտն ալ ազատ չէ, այր մ'ընտրած է՝ որ զինքը տմարդւոյ մը թշնամանքներէն ազատած է. այր մը՝ որ ունի բաւական աշնուութիւն իմանալու թէ գրից տարբերութիւն կայ, եւ գիտեմանքամայն չարաչար չգործեանէ՝ իրեն բաց եւ չհրընկալ տան մ'իրաւունքը: Ի մի բան՝ ֆէոտորա Օրլովիչ՝ գուտար Զեզ միտեալ է:

Ալեքսի ապշեցաւ. կը կարծէր թէ հեռուէն իշխանին ձայնը կը լսէր՝ որ զինք գիւթելով ու մոգելով՝ անպատում երջանկութիւն կ'աւանդէր:

«Ինչն, կրկնեց դողդոջուն ձայնով, Բենն, եղկելոյս եւ անծանօթիս: Ո՛չ, ո՛չ. եղածն երազ, քաղցր երազ մըն է՝ որ զիս խաղ կ'ընէ:»

«Ըսածս ճշմարտութիւն է, պատանի, խելակորոյս մի՛ ըլլաք, յարեց Օրլովիչ ծանրութեամբ: Թէ առ այժմ ամուսնութիւնն չի կրնար ըլլալ, յայտնի է. զԶեզ կայսրուհւոյն կը յանձնեմ եւ ֆէոտորա ալ իւր սիրտը գթաւատ իշխողին կը բանոյց եւ կատարինեայ հօր ձեռքը կը հարթէ կը բառնայ ամէն խուլեղատ՝ որ Վաֆօն տեղակալը գտնուիս կը բաժնէ: Մինչեւ այն աստի տունս Զեզի միշտ բաց է գիտնալով որ կրնամ Զեր պատուաւորութեան վրայ վստահել եւ ապահով եմ թէ շատխօսութեամբ ի գերեւ չ'ըլլեր մեծարանաց հաւատարիք մը՝ որ Զեզ վստահութիւն կը չնչէ:»

«Եւ ես այս ամէն շնորհաց ինք զինքս արժանաւոր պիտի ցուցնեմ, գուցե պատանին ոգեւորեալ: Որչափ բախտաւոր կ'ընեն զիս Զեր խոստումները. թող տրուի ինձ առիթ՝ արժանաւոր ըլլալ ցուցնելու՝ առաքելով զիս կայսրուհւոյն իբր հաստատարիմ ծառան ընդդէմ թշնամաց, որպէս զի արեամբս գնեմ այն պատին՝ որուն զիս արժանի կ'ընեն:»

«Հայրենեաց ծառայելու առիթ կ'ունենեաք, ըսաւ իշխանը ծանրութեամբ. բայց Բեննպէս — Ռուսաստան Զեր հայրենիքն է: Զեր անունը գաղղական է եւ ընդհանր կը սխեմ՝ անգամ մը լսեցի որ Գուք ինքնին խօսելով Զեր մանկութեան վրայ՝ կ'ըսէիք թէ մանկութիւնս փառիւն չըլլակայքն անցուցած եմ:»

«Ճիշդ է, իշխան իմ, պատասխանեց պատանին լափօն, մանկութիւնս Գաղղիա անցուցած եմ մարդու մը քով՝ որուն անունը կը կրեմ, զոր եւ հօրս պէս կը սիրեմ, կը մեծարեմ. բայց ոչ Գաղղիա այն երկիրն է, յոր յարած ըլլամ սրտով, եւ ոչ այն մարդը հայրս է:»

«Առակաւոր են Զեր խօսքերն ու հանելուկի կը նմանին. լաւ բացատրեցէք:»

«Դեռ մտնուկ էի, սկսաւ լափօն, երբ այն ամէն բան կը հետաքրքրէր զիս, որ Ռուսիոյ հետ յարաբերութիւն ունէր: Չինուորութենէ ետքն՝ որուն սաստիկ սէր ունէի, գլխաւոր զբաղման էր Ռուսաց լեզուն, գրականութիւնն ու պատմութիւնը: Ռուսիոյ ծառայութեան մէջ զինուոր ըլլալու առաջագործիւնը հաստատուն եղանակաւ դրոշմուած էր մտաց մէջ. եւ լափօն՝ զոր հայր կը յորջորջէի, զիս որոշմանէս յետս կեցնել չ'արդողեյն ետեւ՝ թող տուաւ որ ուզածս ի գործ գնեմ: Ցանկութիւն տարուան էի, երբ զինուորական ուսումն աւարտեցի: Բարձրագոյն դպրոցը յաճախած ժամանակս՝ Ռուսիոյ գետնային որդւոյն հետ ծանօթացայ՝ որ իւր հօր ներկայացուց ինզիրքս, եւ սոյն ազդեցիկ մարդուն միջնորդութեամբը՝ Նորին Վեհափառութեան՝ կայսրուհւոյն բանակաց միջն մէջ դրօշակիր եղայ: Անձկալի դատարարակէս ճեմելուս նախընթաց երկիրէն՝ հրաւիրեց ինք զիս իւր սենեակը, եւ յայտնեց ինձ այն զոր ի բազմաց հետէ գուշակած էի, թէ ինք իմ հայրս չէ եւ ինձ տրուած անունն իմն չէ. զայն եւս ծանօց թէ ծնողք չուրիս եւ թէ մինչեւ որ քսանուհինգ տարեկան չըլլամ՝ չեմ կրնար իմանալ ծնողացս անունն ու աստիճանը: Բայց միանգամայն ինձմէ խօսք առաւ՝ որ յամենայն կարեւոր դիպուածս՝ յորս իմ ո՛վ ըլլալս հարկ է որ իմացուի, իրեն գրեմ, գլխաւորաբար ըսաւ՝ ամուսնանալ ուղարժ ժամանակդ, երբ ամբարտաւանութիւնն ու նախապաշարունքն անպաճոյճ պաշտօնակալիդ արգելք ըլլան:»

«Ամբողջն ի միասին՝ վէպ մըն է, աւելցուց իշխանը քմծիծաղով. եւ ո՛վ գիտէ, թերեւս լափօն տեղակալին դիմակին ներքեւ ծպտեալ իշխան մը կայ, որուն ազգակցութիւնը Օրլովիչ իշխանին իրեն պատուի պիտի համարէ: Այս պատմութիւնը կայսրուհւոյն աչքն ի Զեզ պիտի գարձնէ. կատարինէ խորհրդաւորը կը սիրէ: Բայց հիմայ, յարեց ոտք ելելով, պատօնս զիս կը կուէ: Ցտեսութիւն, բանկամ. Զեր բախտը ծածուկ պահեցէք մինչեւ այն օրը, յորում խորհրդաւոր հանգստը պարզուի:»

Իշխանը ձեռքը պատանւոյն երկաթեց, զոր լափօն լի մեծարանօք շրթանցը մերձեցուց:

(Շարունակ)

